ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ
ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ ՊԱՐՈՆ Մ. ՄԱՆՐԻԿՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Մանրիկյան.

Ի պատասխան Ձեր 18.01.2019թ. հ.01/34Մ գրության՝ տեղեկացվում է.

Երևան քաղաքում ծառայողական ավտոկայանատեղերի կազմակերպման իրավունքներ տրվել են «Ավտոտրանսպորտային միջոցների կայանատեղերի տեղական վճարի մասին» օրենքի, ՀՀ կառավարության 2012թ. հոկտեմբերի 10-ի հ.1293-Ն և Երևան քաղաքի ավագանու 2013թ. դեկտեմբերի 10-ի հ.93-Ն որոշումների հիման վրա՝ մի շարք ֆիզիկական և իրավաբանական անձանց, որոնք, ըստ սահմանված պահանջների, ներկայացրել են համապատասխան փաստաթղթերի փաթեթը: Ինչպես «Ամերիա» ՓԲԸ-ն, այնպես էլ մնացած կազմակերպությունները, որոնք դիմել են Երևանի քաղաքապետին՝ 2019թ.-ին շարունակելու ծառայողական ավտոկայանատեղերի շահագործումը, Երևան քաղաքի ավագանու 2013թ. դեկտեմբերի 10-ի հ.93-Ն որոշման 5-րդ կետի 6-րդ ենթակետի պահանջի համաձայն՝ համապատասխան չափով մուծել են տեղական վճարները և դիմումներին կից ներկայացրել են անդորրագրերը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ